«ԼՐԱՑՄԱՆ» ԼՐԱՑՈՒՄ

«Երեկոյան Երևան»-ի այս տարվա օգոստոսի 15-ի համարում տպագրված էր տարիներ առաջ վախճանված ճարտարապետ Տիրան Երկանյանի որդի Լ. Երկանյանի «Մի կարևոր լրացում» երկտողը: Պարզվում է, որ նույն թերթի հունիսի 20-ի համարում Ա. Բաղդասարյանը ««Մոսկվա» կինոթատրոնի երկրորդ ծնունդը» վերնագրով հոդվածում, որպես «շենքի նախագծի հեղինակ, գլխավոր ճարտարապետ» նշել է միայն Գևորգ Քոչարի անունը: Եվ ահա Լ. Երկանյանը լրացնում է Բաղդասարյանին, գրելով «... չգիտես ինչու, տպագրված նյութում չի հիշատակված շենքի նախագծի հիմնական հեղինակի՝ Տիրան Երկանյանի անունը: Չէ՞ որ հենց նրա ստեղծագործական մտահղացումների արդյունքն է «Մոսկվա» կինոթատրոնի շենքը: Գ. Քոչարը հեղինակակից է և ակտիվ մասնակցություն է ունեցել հատկապես շինարարական աշխատանքներին»: «Լրացման» հեղինակը հոդվածի վերջում մի անգամ ևս կրկնում է, թե «նման շենքի հիմնական հեղինակի անունը չի կարելի անջատել իր ստեղծագործությունից»:

Միանգամայն տեղին է, թղթակից Ա. Բաղդասարյանը այդ կարգի բացթողում չպիտի աներ: Բայց արի տես, որ տվյալ «լրացումը» նույնպես պակասավոր է: Ակներև սխալ է, որ իբր կինո «Մոսկվա» շինության հիմնական հեղինակը Տ. Երկանյանն է, իսկ «գործի գլուխ բերողը»՝ Գ. Քոչարը:

Սովետահայ ճարտարապետության պատմությանը նվիրված գրքերում այդ շինության լուսանկարների տակ, որպես հեղինակներ գրված է և՛ մեկի, և՛ մյուսի անունը այբբենական կարգով: Հեղինակ ճարտարապետներից ոչ մեկը այդ փաստի նկատմամբ որևէ առարկություն չի ունեցել, հետևաբար հավասար հեղինակներ լինելը միակ ճշգրիտ իրողությունն է:

Պատահում է, իհարկե, որ հեղինակային խմբում պարտականությունները բաժանվում են, բայց այդ հիմք չի տալիս հեղինակներին «հիմնական» և «ոչ հիմնական» խմբերի բաժանելը, եթե նախօրոք համաձայնություն չի կայացվել որևէ ձևի բաժանման վերաբերյալ:

Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի նախագծման ժամանակ ես աշխատում էի «Գիպրոգոր»-ի այն նույն սենյակում, որտեղ ստեղծվում էր այդ նախագիծը: Շինության գլխավոր և մյուս ճակատների գծագրերի վրա աշխատում էր Պատո (Պատվական) Անանյանը և նրան ղեկավարում, հաճախ էլ անձամբ ջնջում ու գծում էր Գևորգ Քոչարը. նա անձամբ մշակում էր նաև մանրամասները, այդ թվում սյուները՝ խոյակով ու խարիսխով, ռոմբաձև պատուհանները և այլ մասեր:

Որպես ստեղծագործող ճարտարապետ Գևորգ Քոչարի անուրանալի քանքարին ստվեր նետելը անարդար կլինի:

Այսպիսի թյուրիմացությունների, ցավոք, հաճախ ենք հանդիպում նաև մեր օրերում: Ոչ խրախուսելի ավանդույթը շարունակվում է, ճարտարապետական կառուցվածքների պատերին չեն գրվում նախագծողի և կառուցողի անունները: Դեռ ավելին, ո՛չ թերթերում, ո՛չ էլ տարեգրքերում այդպիսիք տեղ չեն գտնում: Որոշ ժամանակ անց գծագրերը հնանում և որպես անկարևոր նյութեր՝ չեն հանձնվում արխիվներին և ոչնչացվում են: Այս միանգամայն աննորմալ, թերևս անհանդուրժելի վիճակ է, ենթակա խիստ ափսոսանքի:

Նման պարագաներում զարմանալի չէ, որ հաճախ մեկի աշխատանքը վերագրվում է մյուսին, դառնում մեծ անախորժությունների առիթ: Ավելի կոնկրետանալով, բերենք մի շարք օրինակներ, որ վերաբերում են անձամբ տողերիս գրողին և ինքնահնար չեն: Հետպատերազմյան առաջին տարիների Երևանի ճարտարապետի տանը կազմակերպված ցուցահանդեսում Արտաշատի շրջանի երբեմնի Գյոդակլու (այժմ՝ Մրգավան) գյուղի գլխավոր հատակագիծը, որը ստեղծվել էր Գևորգ Քոչարի և իմ կողմից, ներկայացված էր որպես մի այլ ճարտարապետի գործ:

Տարիներ առաջ երիտասարդ ճարտարապետներից մեկը Միության անդամ դառնալու համար, որպես իրականացված նախագիծ ներկայացրել էր իմ նախագծերից Արզնիի հիդրոէլեկտրակայանի մշտական բանավանը, որ հիմա Արզնի N 1 առողջարանն է: Հայկական Սովետական հանրագիտարանի 2-րդ հատորի 47-րդ էջում «Արզնի – քաղաքատիպ ավան (1953)» հոդվածում շուրջ 28 տարի գոյություն ունեցող

այդ ավանի հեղինակի անունը գրելու փոխարեն, հոդվածագիր ճարտարապետ Հրայր Իսաբեկյանը գրել է իր անունը՝ որպես նախորդ, բայց չիրականացված նախագծի հեղինակ, ապա և Կ. Ղազարյանի անունը՝ որպես հետագա կառուցվելիք ավանի նոր նախագծի հեղինակ, որով դեռ ոչինչ չի կառուցվել:

Գյումուշի հիդրոէլեկտրակայանի գլխավոր շենքի մուտքի ճակատին մարմարե սալի վրա փորագրված է կառուցման ղեկավար, հայտնի հիդրոշինարար Աղաբաբովի անունը: Հայերեն տեքստում Աղաբաբյանը ներկայացված է՝ որպես ճարտարապետ: Տասնյակ տարիների ընթացքում «Հայգլխէներգոն» այդ սխալը չի վերացնում:[1]

Ղափան քաղաքում երաժշտական դպրոցին կից տողերիս գրողի նախագծով կառուցված մոտ 700 տեղով համերգասրահի լուսանկարը, որ տպագրվել է «Սովետական արվեստ» հանդեսի 1980 թ. 11-րդ համարի 19-րդ էջում, վերագրվել է ճարտարապետ Սարգիս Գուրզադյանին:

«Հայհիդրոնախագիծ» ինստիտուտը, որպես շեֆ հիմնարկ իրականացրեց Գառնի գյուղի հանույթը, ստեղծեց գլխավոր հատակագիծը (հեղինակ՝ Տ. Մարության) և տեղակայեց այն: Եվ երբ ամբողջովին իրականացված էր գյուղի կառուցապատումը, մի երկու շինության կառուցման հողամաս հատկացնելու անվան տակ, «Գիպրոսելպրոյեկտ» ինստիտուտում վերագծեցին այդ հատակագիծը, ներկեցին ու նոր «հեղինակների» (Լ. Գորյան և ուրիշներ) անունով Պետշինի ներկայացմամբ ՍՍՀՄ ժողտնտնվաճումների ցուցահանդեսում նվաճեցին արծաթե մեդալ:

Երևանի Ազատության պողոտայի (սկզբնամասից մինչև երկաթգիծ[2]) կառուցապատման հատակագիծը, ինչպես և բոլոր շենքերը (1-12 համարների տակ) նախագծվել են «Հայհիդրոնախագիծ» ինստիտուտում (հեղինակ՝ Տ. Մարության)՝ որպես Երևանի հիդրոէլեկտրակայանի բանավան. Հայկական Սովետական հանրագիտարանի 3-րդ հատորի 563-րդ էջում հոդվածագիր ճարտարապետ Մարտին Միքայելյանի կողմից այնպես է շարադրված, կարծեք հեղինակներ են Հայաստանի

[1] 2000-ական թվականներին սխալը ուղղվել է և փակցվել է նոր հուշատախտակ:
[2] Այժմ՝ Նազարեթ Սուրենյանի փողոց:

սովետացման 50-ամյակին նվիրված կոթողի հեղինակներ Ջ. Թորոսյանն ու Ս. Գուրզադյանը:

Բերված օրինակները ավելի քան բավարար են վիճակը աննորմալ համարելու և այն շտկելու միջոցառումներ մշակելու համար: Բանն այն է, որ Ճարտարապետների միությունը, նաև Պետշինը տպագիր օրգան չունեն: ԳԱ Արվեստի ինստիտուտի հրատարակվելիք «Համահավաքում» փոքրաթիվ շինություններ են գրանցվում: Թերևս միակ հնարավորն այն է, որ Պետշինը տարին մեկ հրատարակի Բյուլետեն/ Տարեգիրք, որում գրանցվեն նախագծային ինստիտուտներում ստեղծված նախագծերի, կամ կառուցումն ավարտած շինությունների «կենսագրությունները»: Այս ձեռնարկումը նաև շատ պիտանի կլինի մեր հետնորդներին:

19.10.1981 ՏՄ